

Այս հիմնարկութեան նպատակն է, ինչպէս ասուած է Կանոնադրութեան Ա. յօդուածով, «գալրոցական դրամական նպաստներով օգնել այն հայ պատանիներին, որոնք ուսման ընդունակ են բայց միջոց չունին համալսարան եւ բարձրագոյն դպրոց մտնելով մասնագիտութիւն սովորելու, մեր ազգին օգտակար հանդիսանալու համար»: Բայց այս նպատակները պէտք է յատկացուին այն ուսանողներին, «որոնք իրենց ուսումնաւարտելուց վերջը յանձն կ'առնեն Հայաստան երթալ: Նրանք պարտաւոր են Հայկական Կառավարութեան դպրոցներում դասախօսել կամ առհասարակ իրենց մասնագիտութիւնը Հայաստանում գործադրել»:

Նուպարեան հիմնարկութեան թոշակաւորները, ինչպէս որոշակի շեշտուած է Կանոնադրութեան 5րդ յօդուածում, պէտք է հայցելին պատկանին, բայց առանց խտրութիւն զնելու նրանց կրօնական դաւանութեանը մէջ: Թեկնածուները պէտք է համապատասխանեն հետեւեալ պայմաններին (յօդ. 7). ա. հայերէն կարգալ եւ գրել պէտք է գիտնան. բ. ոչ պակաս քան 14 տարեկան եւ ոչ աւելի քան 20 տարեկան լինին. գ. բարի վարքի վկայական ներկայացնեն Եկեղեցական իշխանութեան կամ այլ պատշաճաւոր մարմնի կողմից տրուած. դ. բժշկական վկայական ունենան իրենց առողջական վիճակի վրայ. ե. ոչ մի քաղաքական կուսակցութեան չպատկանին եւ իրենց ուսման ընթացքի ժամանակ էլ ոչ մի քաղաքական կազմակերպութեան չյարին. զ. այս պայմաններին համապատասխանող աղջիկ ուսանողուհիներ եւս կրնան ընդունուիլ իրրեւ թոշակաւոր. բայց ուսանողուհիների թիւը թոշակաւորների ընդհանուր թուի մէկ հինգերորդից աւելի պէտք է չլինի:

Հիմնադիր բարեգործը հարկ է համարել նշանակել նոյնպէս թէ ինչ մասնագիտութիւն նախատեսած է, որ իր թոշակաւորները հետեւին (յօդ. 12). «Որովհետեւ մեծ թուով հայեր, որոնք իրաւագիտութիւն, բժշկութիւն եւ նոյն իսկ երկրագործութիւն են սովորել, մեծ գթուարութիւն են զգում իրենց արհեստը բանեցնելու եւ ստիպուած են ուրիշ պարագայում փնտռել, իրենց սպորուտը շահելու համար, ուստի թոշակներ պէտք է յատկացուին մասնաւորապէս այն ուսանողներին, որոնք կ'ուզեն դառնալ՝ մեքենավար, ելեկտրագէտ, քիմիաբան, ճարտարագէտ,

ճարտարապետ, դեղագործ, վաճառական եւ մանաւանդ այնպիսիներին, որոնք յանձն կ'առնեն իրենց սովորած մասնագիտութիւնը Հայաստանի դպրոցներում դասախօսելու: Իրրեւ բացառութիւն կարելի է 10 թոշակից 2ը յատկացնել այն ուսանողներին, որոնք ուրիշ ճիւղերի կը հետեւին, օրինակի համար գրականութեան եւ դեղարուեստի»:

Պօղոս Նուպար՝ իր այս հայանպաստ հաստատութիւնը հիմնել է Բրիւսէլում, ուր բնակուած է իր միակ դուստրը, որ ամուսնացած է մի աղնուական Բեղլիացու, կոմս դ'Արսկոտի հետ (comte d'Arschot-Schoonhoven): Հաստատութիւնը դրուած է մի վարչական խորհուրդի հսկողութեան տակ, որ բաղկացած է 5 անդամից: Սրանցից 2ը Հայոց Բարեգործական Ընդհանուր Միութեան Կենդրոնական Վարչութեան կողմից պէտք է նշանակուին, 2ը Բրիւսէլի Համալսարանի Հաստատութեան (Fondation Universitaire) կողմից, իսկ 5երորդը պէտք է լինի Հիմնադիր Նուպարի ուղղակի սերունդը կամ սրա ներկայացուցիչը: Այս վարչական խորհուրդն է, որ լիազօր կերպով վարում է հաստատութեան ելեւմուտքը:

Այս հաստատութիւնը հիմնուած է 1924ին: Սկզբնական գրամագլուխը՝ 20.000 (քսան հազար) անգլիական լիրա ստէրլինգ էր, որ Պօղոս Նուպար դրաւ Լոնդոնի Barklay's Bank Ltd գրամատան մէջ, 5% տոկոսաբեր արժեթղթերով: Նրա պայմանն էր, որ այս գրամագլուխը պիտի մնայ անձեռնմխելի (trust) եւ միայն տոկոսը պիտի գործադրուի: Այնուհետեւ բարերարը իր մահուանից անմիջապէս յառաջ, այն է 1930ին, այդ գրամագլուխի վրայ աւելացրեց 50.000 ամերիկական դոլլար (= մօտ 10.000 £), դարձեալ տոկոսաբեր արժեթղթերով: Եւ որպէս զի այս գրամագլուխը չպակսի, այլ տարուց տարի աճի, Կանոնադրութեան յօդ. 2ի համաձայն, Բարկլէյ բանկը պիտի պահէ ընդհանուր եկամտի ¹/₅ը եւ աւելացնէ գրամագլուխի վրայ, եւ միայն մնացած ⁴/₅ը ուղարկէ Բրիւսէլի Համալսարանական Հաստատութեան, գործադրուելու համար: Եւ որովհետեւ Պարիզի Հ. Բարեգ. Ընդհ. Միութիւնը որոշ հսկողութիւն պիտի ունենայ, իր 2 ներկայացուցիչները միջոցով, թոշակաւորների վրայ, ուստի Բրիւսէլի Համալսարանական Հաստատութիւնն էլ, բանկից ստացած գումարի

¹/₁₀ը պէտք է զնէ Բարեգործականի տրամագրութեան տակ, այս վերջինի ընթացիկ ծախքերը ծածկելու համար: Եւ վերջապէս՝ Կանոնադրութիւնը նախատեսել է նաեւ այն պայմաններն, երբ Հ. Բարեգ. Ը. Միութիւնը կամ Բրիւսէլի Համալսարանական Հաստատութիւնը լուծուին: Այն ժամանակ անգլիական յիշեալ բանկը գրամագլուխի եկամուտը, ըստ Կանոնադրութեան գործադրուելու համար, պիտի յանձնէ Պարիզի Հայ Լուսաւորչական Եկեղեցուց թաղական կամ վարչական խորհուրդի նախագահին, որ Նուպարեան գերդաստանի մի ներկայացուցիչ հետ պիտի շարունակէ գործել:

Տիրող ընդհանուր տնտեսական տագնապն ազգած է նաեւ այս հայանպաստ ձեռնարկութեան արդիւնքի վրայ: Անձեռնմխելի գրամագլուխը, ներկայ պայմանների մէջ, թէ՛ իրրեւ հիմնադրած եւ թէ՛ իրր տարեկան տուկոս՝ զգալի կերպով պակասած է: Աչքի առջեւ ունիմ 30 Սեպտեմբեր 1931 եւ 30 Սեպտեմբեր 1932 հաշուեկշիռները: 1930/31ին տարեկան եկամուտ է եղած (ընդհանուր մուտքի ⁴/₅ը՝ ըստ Կանոնադրութեան) 243.033,80 բելգ. ֆրանք, իսկ 1931/32ին միայն 160.061,50: Ըստ այնմ էլ պակասած է թոշակաւորների թիւն եւ նրանց տրուած նպաստը:

«Պօղոս Նուպար վաշա հիմնարկութիւնը» իր հաստատման թուականից, այն է 1924ից մինչեւ 1932 Սեպտեմբեր 30, ունեցել է 48 թոշակաւոր ուսանող, որոնց վրայ ծախսել է 1,036.000 բելգ. ֆրանք: Այս ծախսն անհասար կերպով է բաժնուած: Նրանց մէջ կայ մէկն, որ երկար տարիներ օգտուել է նպաստից եւ ստացել է 112.000 ֆրանք, բայց սա բացառութիւն է կազմում:

Նուպարեան Հիմնարկութեան այժմեան վարչութիւնը մեծ հոգածութիւն է ցոյց տալիս թէ գրամական խնդրի կանոնաւորութեան եւ թէ թոշակաւորների յարմար ընտրութեան:

(Շարունակելի:)

ՍԱՐՈՒՆՍ



Ծ Ա Ն Օ Թ Ը Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ի
Ս Տ Ն Մ Պ Օ Լ Ո Յ Պ Ե Տ Մ Ո Ւ Թ Ե Ն
Ե Ր Ե Մ Ի Ա Չ Ե Լ Ե Պ Ի Ի Բ Ե Օ Մ Ի Ի Ր Ը Ե Ա Ն

(Շարունակութիւն:)

Սելամիէի ընդարձակ լայն պողոտան վարէն մինչեւ անխառնել, եւ տաղ-խամամ ու զիլիխտար-պահիկ կոչուած տեղերը ամբողջ դրաւուած էր հայ երեւելիներու եւ բարեկեցիկ արհեստաւորներու տուներով: Սելամիէի շուկան ամբողջապէս երկուստեք կը փայլէր սիրունակ խանութներով հայ նպարավաճառներու, ձկնավաճառներու, պողպավաճառներու, գինեվաճառներու եւ վարսավիրայ սփիւղներու, որոնց կարգին ողբացեալ Հայրսալ ունեցաւ իր շատ գեղեցիկ սրճարանը՝ եղական իր տեսակին մէջ, զի անոր պատերուն վրայ Հայրս՝ նկարիչ Պէհզատ Ումէտի ձեռնասուն Միքէ ճարտարարուեստ անձին գծադրել տուաւ Հայկի, Վարդանի, Արա Գեղեցիկի եւ այլ հայ նախարարներու իւղաներկ մեծագիր պատկերները եւ այսպէս՝ այդ խանութը եղած էր հետաքրքրական վայր մը հայութեան, ուր ամէն երեկոյ կը յաճախէր խ. Պ. Միսաքեան՝ որու քով կը գումարուէր միշտ հայ մտաւորականներու ընտիր խումբ մը եւ ուր տեղի կ'ունենային շատ անգամ գիշերային բանախօսութիւններ:

Այս սրճարանը այրեցաւ 1882ին, եւ հայրս թէեւ կրցաւ դայն վերաշինել, բայց վախցաւ (եւ իրաւամբ) վերագծել տալ նոյն ազգային մեծ դէմքերու պատկերները:

Սելամիէի այս լայն պողոտային վրայ կը գտնուէր կնոջ Մեծ-Հայր (մօրահայր) Յարութիւն Փափաղեանի կամ Տէր Բառնարատեանի շքեղ բնակարանը, ուր առաջին անգամ՝ 1863ին տեղի ունեցած են թատերական ընտիր ներկայացումներ, որոնց մասին միշտ ընտիր ներկայացումներ, որոնց մասին միշտ չեն մոռցած իրենց յիշատակութիւնն ընել հայ թատրոնի պատմութիւնը գրողներ. բայց սխալ է ըսել՝ թէ 1855ին ալ Օտեաններուն տանը մէջ տեղի ունեցած ըլլան նման ներկայացումներ, զի այդ միջոցին հոն Ազգ. Սահմանադրութեան խմբագրիչ Յանձնաժողովը կը գումարուէր, մանաւանդ կը ծեծուէր նաեւ աւելի կարեւոր նպատակի մը ձեռնարկութիւնը, այն էր՝ կազմութիւնը Բաժանորդական ընկերութեան, որ կը հաստատուէր 1859ին Նախագահութեամբ Գր.

Օտեանի, եւ որուն նպատակն էր՝ բանալ զիւ- շերթի վարժարան մը ճրիպէս դաստիարակելու համար ազգատիկ 25 մանչ եւ 25 աղջիկ:

Գր. Օտեան այս նպատակին գործադրու- թեանը համար կոչ մը կ'ուղղէր ժողովուրդին՝ «որուն փոքրիկ լուսնի հանգ մ'է ան- սպառ» կը գրէր¹²⁷:

Սելամիէի պողոտայէն վեր Ս. Խաչ փո- ղոցին ճիշդ բերանը կը գտնուէր նաեւ Մեծ Հօրս Սախրիչ Դուկաս աղայի տունը, ներքեւը իր խանութը, երեւելիներու ժամադրաւայր, որուն առջեւ կար ամենախոշոր կնճիկ ծառ մը, զոր տասը հոգի շուրջը ձեռք ձեռքի պար բռնելով հագիւ կրնային զրկել: Փողոցին այդ մասը ամբողջովին կը հովանաւորէր կնճիկն, անոր ներքեւ կու գային նստիլ թաղին ծե- րունիները, իրենց օրը անցնելու եւ իրենց կեանքի հին յիշատակներէն իրարու պատ- մելու:

Այդ ծառը 1868ին հարկ եղաւ արմատա- խիլ հանել, երբ Մեծ Հօրս տունն ալ որ շատ հին էր, վար անուելով, տեղը նոր մը շի- նուեցաւ, ներքեւն ալ դեղարան մը, ուր սկսաւ աշխատիլ Մօրեղբայրս՝ Նշան Դուկասեան, քաղաքային բժշկական վարժարանին քիմիա- բանութեան դասատու անուանուելէ առաջ 1876ին:

Թաղին առաջնակարգ դեղարանն էր այն, անոր մէկ պատուհանին վրայ մօրեղբայրս գծագրել տուած էր մեծկակ կմախք մը մարդ- կային, ներքեւն ալ՝ «Ծանիք գեղ» խօսքը, որպէս զի այդու՝ ժողովուրդին լուս հրաւի- րակ մը ըլլար առողջապահութեան:

* * *

Սելամիէի բնակչութեան հետզհետէ զգա- լիօրէն բազմանալը պատճառ եղած է, որ ա- նոր հիւսիսային կողմը հաստատուէին տա- կաւ Հայեր, եւ կազմէին ուրոյն թաղեր, նախ՝ Ինատիէ անունով, յետոյ Առապպատէ յոր- ջորջումով, որոնց առաջինը Խ. Պ. Մխա- րեան Հնարաւան անունով մկրտած էր, եւ երկրորդը՝ Արապորդի:

Իճատիէի մէջ կը բնակէին պետական պաշտօնեաց նշանաւոր Հայեր՝ ինչպէս ար- քունի Սիլիմի պաշի Կիրակոս աղա (Հայր Այվատեան Սահակ Եպիսկոպոսին), Ընկաթ պաշի Գրիգոր էֆ. Ներսէսեան, Թաշնի պաշի

¹²⁷ Յանկուած Արշալոյս Արարտեան թերթին Զմիւռնից 17 Մայիս 1859:

Առաքել աղա, նաեւ ֆարտաբապետ Յով- հաննէս Աղնաւուրեան, Կասեան ու Քիւրա- րեան եւ ուրիշներ, որոնցմէ՝ Գր. Ներսէ- սեան 1873ին հիմնեց հոն Երկսեռ վարժա- րան մը. աղջիկներունը կոչեց՝ Երմոնեան, ի յիշատակ իւր վաղամեռիկ Երմոնէ դստեր, ու մանչերունը՝ Ներսէսեան՝ իւր Հօրը անու- նով: Այս վարժարանները կը պահէն ցարդ իրենց գոյութիւնը ժողովուրդին լուսման- րուն շնորհիւ:

Իճատիէի թաղը մերթ Ս. Խաչի եւ մերթ Գուգիւտենուքի թաղական Խորհուրդին իրա- լասութեան տակ եղած է, միջոց մ'ալ՝ տեղ- ւոյն աղջայիները փափաքեցան առանձին Եկեղեցի մը ունենալ. հիմերն իսկ փորել տուին, քարերը բերին, բայց՝ կարելի չեղաւ շինութեան արտօնութիւնը ստանալ կառա- վարութենէն, զո՛ւցէ բարեբախտաբար, զի եթէ շինուած ըլլար, այդ ալ ճարակ պիտի ըլլար այն սոսկալի հրդեհին, որ 1920ի աշ- նան սկիզբը թաղը ամբողջովին սրբեց-սկիզբեց միտիւր դարձուց, կիսաւեր թողլով նաեւ վարժարանը:

* * *

Ներսէսեան եւ Երմոնեան վարժարաններն ալ ունեցած են միշտ յառաջադէմ վիճակ, շնորհիւ Մալաթեանի եւ Հինուլեանի նման կարող դասատուներու եւ դաստիարակներու, եւ եղաւ՝ որ Ինատիէ, Սելամիէ եւ Ենիմա- հալլէ վարժարանները քանիցս միացան իրա- րու՝ մէկ ծրածիրով, նախ՝ Քրիստոստուր Դազարոսեանի եւ յետոյ՝ յայտնի մանկավարժ Համբարձում Իփէքճեանի ընդհանուր Տես- չութեամբ, սակայն այս յոյժ բազմալի Միու- թիւնը երկար կեանք չունեցաւ¹²⁸:

Իճատիէի մէջ թաղային վարժարաններէն

¹²⁸ Երբ բժիշկ վկայուեցայ ու Պարբեր թողլով զայի հաստատուիլ Իսկիւտար, արուեստս ի գործ դնե- լու համար, հոն իմ գլխաւոր մտածումս ու նուիրական պարտականութիւնս եղաւ, կրթութեան օրրանն եղող Ս. Խաչի աշակերտ եւ աշակերտուհիներուն առողջա- պահութեանը հսկող ըլլալ անձնուիրաբար, եւ այս նպատակաւ 1886ին նամակներ ուղղեցի, ո՛չ միայն Ս. Խաչի, այլ եւ՝ Ս. Կարապետի եւ Իճատիէի վար- ժարաններուն Հոգաբարձութեանց, որպէս զի արտօ- նուէի սկիւլ բժշկական այցելութիւններս: Անմիջապէս ընդունելութեան արժանացաւ առաջարկս, եւ ուղղած նամակիս պատճէնը հրատարակել տուաւ Եկեղեցաւ- լի Հոգաբարձութեան Ատենայեւոր (տե՛ս «Արեւիկ», Թիւ. 825, Գ. տարի, Կ. Պոլիս 4/16 Հոկտ. 1886):

Թէ ինչպէս կը կատարէի իմ բժշկական այցե- լութիւններս, գրած եմ այս մասին Պոլսական Բիւզան- դիոն եւ այլ թերթերու մէջ՝ մանրամասն կերպով եւ յետոյ ալ գտնուեց ամփոփած եմ «Կարոցական Առող- յապահութիւն» Հատորիկի մէջ, որ լոյս տեսաւ վե- նետիկ Ս. Դազարի Տպարանէն 1908ին:

զատ մասնաւոր դպրոցներ ալ բացուած են ցերեկեայ կամ գիշերօթիկ, որոնց նշանակե- լիներն էին՝ Գալուքճեան մանկապարտէզը, յետոյ Մեղպուրեան աղջիկներու յատուկ գի- շերթիկ բարձրագոյն վարժարանը, որ առա- ջին անդամ Կ. Պոլսոյ Հիւսար Տիպի կոչուած տեղը 1865ին սկսելէ յետոյ, ընդհատուած՝ ու վերարացուած է, 1879ին փոխադրուելով Իճատիէ. խիստ փայլուն շրջաններ բոլորեց այդ վարժարանը եւ վերջնականապէս փա- կուեցաւ 1896ին: Հիմնադիրը՝ Մկրտիչ Մեղ- պուրեան ապա Պարիս գացած է եւ հոն իր կեանքը կնքած:

Ասոնցմէ վերջ՝ նոյն թաղին մէջ Պետրոս Կարապետեան՝ քաջ թրքադէտն ալ բացած է գիշերօթիկ վարժարան մը, որ քանի մը տարի յաջողապէս շարունակած միջոցին, յա՛նկարծ հրոյ ճարակ եղած է:

Իճատիէէն Գուգիւտենուք տանող դառի- վայրին վրայ էր երբեմնի այն ազգային վար- ժարանը, զոր յիշատակած եմ Գուգիւտենուքի մասին գրած տողերուս մէջ եւ ուր թատե- րական ներկայացումներ ալ տրուած են մերթ ընդ մերթ:

* * *

Երկար է դեռ Իսկիւտարի հայ պատմու- թիւնը. կը բաւականանամ այսչափով, որ չափէն աւելի զարտուղութեան տարաւ ար- դէն Ծանօթագրութիւններուս ընթացքը, ուս- տի կը փակեմ զայն աւելցնելով՝ թէ Սելամիէ թաղը ունեցած է շատ ընկերութիւններ, եւ բացի նախապէս յիշածներէս՝ որոնք էին՝ բաժանորդական, խնամակալ Տիկնանց Միու- րիւն, Սանուց, Սանուեաց, Ուսումնատա- րած, Կրթասիրաց, հաստատուած է հոն Ըն- քերցասիրացը, որ ունէր արդարեւ իր յա- տուկ ընթերցարանը Սելամիէի մեծ պողո- տային վրայ բացուող փողոցի մը մէջ, եւ որ 1872ին հրատարակած է վաղամեռիկ բանաս- տեղծ Պետրոս Գուրեանի «Տաղի եւ քատրեր- գութիւնի» հատորը, նախաձեռնութեամբ Գոռանեան Աւետիս աշխոյժ երիտասարդին, որ սոյն ընկերութեան հոգին էր եւ պաշտօղը հանդուցեալ բանաստեղծին: Այս ընթերցա- րանին մէջ ալ տեղի կ'ունենար երբեմնակի՝ գիշերային բանախօսութիւններ:

Եղած են նաեւ Առեւտրական, Խնայողա- կան, Երաժշտասիրական եւ նման ընկերու-

թիւններ, որոնք գրեթէ առ օրին մեռած են: Այս ընկերութիւններէն յարատեւութիւն ու- նեցած է միայն Աղքատախնամը, 1880ին հաս- տատուած, որ իր գոյութիւնը կը պահէ մինչեւ այժմ եւ մեծ բարերարի գեր կատա- րած է ու կը կատարէ ամբողջ Իսկիւտարի մէջ, անխտիր խնամելով հայ հիւանդներու հետ եւ օտարազգի կարօտներ:

Իսկիւտար կը պահէ ցարդ Որբանոց մը որ ազգային վարժարաններուն մէջն է հաս- տատուած:

* * *

Սելամիէի կամ Սելամաքի պողոտայէն վեր՝ Անի-պատեմ, վանքի-Այգի կոչուած տեղերէն դէպ արեւելք ընթանալով, կը հաս- նինք Ազգային ընդարձակ Գերեզմանատունը, որուն երկայնութիւնը կը տարածուի Հարաւ- էն Հիւսիս, եւ լայնութիւնը արեւելքէն Արեւմուտք, եւ կը ծառայէ իր Գնարան Իւս- կիւտարի չորս թաղերու¹²⁹ ննջեցեալներուն:

Այս Գերեզմանատունը շատ ու շատ հին է. ժամանակակից է Սուրբ Կարապետ Եկե- ղեցւոյն, որով անոր գոյութիւնը պէտք է տա- նել, դէպի 17րդ դարու սկիզբները, եթէ ոչ առաջ: Վասն զի՝ ինչպէս տեսանք Ս. Կարա- պետի մասին գրուածներուն մէջ, երբ «Լըյ- մաք Իսկիւտարցի» Գրիգոր Պարոնաչը Պատրիարքի օրով (1615—1647), Երուսա- դէմի Սուրբ Յակոբայ վանքին կը նուիրէ Իսկիւտարի մէջ ունեցած իւր ընդարձակ այգին, այդ նուիրատուութեան հետ կը յի- շատակուի Գերեզմանատունն ալ, ուր 1640ին կը հանդէսը արդէն Զաքարիա Վանեցի Պատ- րիարքը, ուստի կրնանք աներկբայ կերպով անոր սկիզբը 1615—1620 թուականներուն մէջ ընդունիլ:

Այս Գերեզմանատունին համար մեր տղայութեանը լսած ենք ծերունիներէ, թէ նախապէս փոսի պէս վայր մ'է եղեր, անտե- րունջ, ու լքուած, որ հետզհետէ լեցուած է թաղուած մեռելներով:

Որպէս զի այս շիրմատանը Ազգային սեպհականութիւն ըլլայ Ադամ անուն Զորե- պան մը իւր բոլոր ունեցածը ծախելով կը գնէ անոր դէպի հիւսիս եղած ընդարձակ մասը եւ կը կցէ զայն արդէն եղածին, որով հինը

¹²⁹ Այսինքն՝ Ենիմահալլէ, Սելամիէ, Ինատիէ, Գուգիւտենուք:

կը նշանակուի իբրև Ս. Կարապետի մաս, իսկ նորն ալ՝ Ս. Սաչի:

Աղամ Ջորեպան կը հանգչի Գերեզմանատունին հիւսիսակողմը Ս. Սաչի թաղ կը չուած մասին մէջ. իր վրան կանգնուած է մարմարեայ բաւական խոշոր գեղեցիկ շիրիմ մը, որ կը կըէ 12 տող Արձանագրութիւն մը՝ սապէս:

է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ԱԳԱՄ ԱՆՈՒՆ ԲԱՐԵՐԱՐ ԱՌՆ ՄԻՈՅ ՈՐ ԷՐ ԱՐՀԵՍՏԻՆ ԶՈՐԵՊԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱՆ ԱՄԴԵՅԻ. ՎԱՃԱՌԵԼՈՎ ՍՈՐԱ ԶԱՄԵՆԱՅ ԻՆՉՍ ԵՒ ԶԱՐԴԻՆՍ ԻՒՐ Ի ՊԵՏՍ ԳԱՄԲԱՐԱՆԻՍ ԸՍՏԱՅԱԻ ԶԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆՍ ԶԱՅՍ ԵՒ ԵԹՈՂ ԲԱՐԻ ՅԻՇԱՏԱԿ ԱԶԳԻՍ ՄԵՐՈՅ. ՈՒՍՏԻ Ի ՀԱՆԳԻՊԻՆ ԶԵՐ ԱՅՍՄ ՇԻՐՄԻՍ ԽՆԴԻԷ Ի ԶԵՆՁ ՄԻՈՎ ՀԱՅԵՐԵՐԻՒ ԱՍԵԼ ԶՈՂՈՐՄԻՍ. 1718

Ամգեցի Ջորեպան Աղամի մարմինը ծածկող այս քարը, որ հաւանաբար անոր մահէն շատ վերջը դրուած է, խիստ կարեւոր է. եթէ համարենք որ նա 1718ին յառաջացած տարիքի մէջ կնքեց իւր կեանքը, զոր օրինակ 70 կամ 75 տարու, ծնած կ'ըլլայ այն 1643—1648 թուականներուն, որով կրնանք ենթադրել թէ Գերեզմանատունին այդ վերի մասը ինքը գնեց 1680—1690 թուին: Ասոր մօտիկները կը գտնուի 1761 թուականով շիրիմ մը որուն տապանագիրն է.

է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՐՍՏԵԱՆ ԱՆԿԱՅ ԲՈՒՂԷՆ ԷՓԷԽՅԻ ՏԷՐ ՄԱՀՏԵՍԻ ՅԱԿՈՒԻ ՈՐԿԻ ՄԱՀՏԵՍԻ ՏԻՐԱՅՈՒ ՄԿՐՏԻԶԻ ՈՐ ՓՈՆԵՅԱԻ ԱՌ ԲՐԻՍՏՈՍ ԹՎՆ ՀԱՅՈՅ Ռ. Մ. Ժ. (= 1210 + 551 = 1761):

* * *

Ազգային նշանաւոր Եկեղեցականներ ու երեւելի գրագէտներ կը ներհն հոն իրենց վերջին քունը. անոնց մէջ կան հինգ հատ նախկին Պատրիարքներ Կ. Պոլսոյ, որոնց տապանագիրները անձամբ քաղած եմ ժամանակին եւ թէեւ հրատարակած իսկ եմ զանոնք

1918ի Բաղմովէպին մէջ¹³⁰, բայց հոս ալ աւելորդ չեմ համարիր անոնց կրկնութիւնը:

Այս պատրիարքներուն առաջինն է՝ Զաքարիա Վանեցին, 1640ին վախճանած, որ թաղուած է Ս. Կարապետի բաժնին մէջ եւ որուն Տապանագիրը յիշած եմ արդէն Ս. Կարապետի վրայ գրած իս կարգը:

Զաքարիայի ձախ կողմը կը հանգչի Աստուածատուր Պատրիարքը՝ որ պաշտօնավարած է 1841—1844 եւ վախճանած է 1846ին: Ասոր շիրիմը մեծ ուխտատեղի է, եւ ամէն շաբաթ օր՝ հաւատացեալներ կ'երթան անոր վրայ աղօթելու, եւ իրենց երեսն ու ձեռքերը լուանալով, ջուրը կը սրսկեն շիրիմին շրջակայքը, բժշկութիւն հայցելով կամ յաջողութիւն ու բարօրութիւն խնդրելով, զի կը պատմուի թէ հրաջքներ տեղի ունեցած են անոր գերեզմանէն. ահաւասիկ իւր Տապանագիրը.

ԱՍՏ Է ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՀԻՆ

ԱՆՅԱՒՈՐԲ ԱՍՏԻ, ԳԱՐՅԻԲ ՅԱՅՍ ՏԱՊԱՆ՝ ՀԱՅԵԼ ՄԻ ԱՆԳԱՄ, ՅԱՐՀԻՍ ՍՐԲԱԶԱՆ. ԱՅՆ ՈՐ ԱՆԿԱՍԻՆ ԳՈՐԾՈՅ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՎԵՀ ՀԱՆԴԻՍԱՅԱԻ, ԶԲՆԱՂ ՏԵՍԱՐԱՆ, ՊԱՏՐԻԱՐԲ ՊՈԼՍՈՅՍ ԶԱԲԱՐԻԱ ԱՐՀԻՈՅՆ ԶԵՆՆԱՍՈՒՆ ԸՆՏԻՐ՝ ՏԷՐՍ ՎԵՀԱՐՈՒՆ. ՍՈՅՆ ԵՒ ԱԶԳԱՍԷՐ ԸՍՏ ԻՒՐՈՅ ՆԱԽԻՈՅՆ Ի ՀՈԳ ԻՐ ՀՕՏԻՆ ԶԳԱՍՏ ԵՒ ԱՐԹՈՒՆ, ՍԱ Ի ՅԱԶԳԱՅԻՆ, ԱՆԿ ԽՈՒՎՈՒԹԵԱՆ ԵՂԵԻ ՊԱՏՐԻԱՐԲ, Ի ԽՆԱՄՈՅ ՏԵԱՌԸՆ ՅՈՐԿՈՐՄԱՄԲ ՍՈՐԻՆ ՇԻՆԵԱԼ ԱՆԸՄԱՆ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻՆ ՏԱՃԱՐ ՀՐԱՇԱԶԱՆ. ԱՆԿ ՀԱՆԳՈՅՑ ԶՆՈՐԱ, ՆՇԱՐ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՓԱՅԼԵԱԼ ՀՐԱՇԻՒԲ ՅԱԶԳԸՍ ԱՄԵՆԱՅՆ, ԻՆԲՆ ՎՃԱՐԵԱԼ, ՅԱՒԱԼԻՑ ԶԻՐ ԿԵԱՆ, ՎԵՐԱՍԼԱՅԱԻ, ՅԱՆՄԱՀԻՑ ԽՈՐԱՆ:

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ 1846 ՓՈՆԵԱԼ ՅՈՒՆՈՒԱՐ 2, ԱՄԱՅ 78

Գերեզմանատան ճիշդ մէջ տեղը, կը գտնուի զիրը Կ. Պոլսեցի Յովհաննէս Պատրիարքին, որ սխալմամբ Բարեբոցի կոչուած է, մինչ Գիւտ Բահանայ Աղանեան եւ Աւետիս Պէրպէրեան (էջ 10) զայն Կ. Պոլսեցի ներկայացուցած են. երբ մանաւանդ իւր Տապանագիրն ալ ուրիշ տեղացի զայն չի գրեր եւ անոր Հայրենիքը կամ ծննդավայրը Կ. Պոլիս կը նշանակէ, ահաւասիկ այն.

¹³⁰ «Բաղմովէպ», Տապանագիրք Կ. Պոլսոյ Հայ Պատրիարքաց (էջ 169—186):

ՅԱՎՀԱՆՆԷՍ ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊՈԼՍԵՅԻ ՊՈԼՍԵՅԻ ԲԱԶ ԴԵՏ՝ ՅՕՀԱՆՆԷՍ ԱՐՀԻՆ, ԶԱԲԱՐԵԱՅ ՎԵՀԻՆ՝ ՀՈԳԵՇԻՆ ՈՐԿԻՆ, ՆԵՐԲՈՂԻ ՅԻՇԵԼ՝ ԵԹԷ ԶԱՆՅ ԱՌՆԻՆ, ԲՈՂՈՒԲԵՆ ԲԱՐԻՆԲ՝ ԸՍՏ ՏԵԱՌՆ ԲԱՆԻՆ, ՄԻՆ ՍՄԱՆ ՍՄԻՆ՝ ՀԱԶԻՒ ՄԵՑ ՅԱՅՏԻՆ, ՀԱՄԵՂ ԵՒ ԱՆԼՈՒՐ՝ ՎՍԵՄ ՅԱՏԵՆԻՆ, ԲԱԶ ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆ՝ ԲԱՆԻՑ ԲԱՐՈԶԻՆ, ԶԵՂԵՒ ՄԵՑ ՅԱԳԻՂ՝ ԲԱՌԱՍՈՒՆ ՏԱՐԻՆ, ԳԹԱԾ ԸՆԶԱՏԵԱՅ՝ ՀԱՅՐ ՄԵՐ ԱՆԸՄԱՆ, ԿԱԼՈՎ ՀՊԱՏԱԿ՝ ՎՇՏԱՅ ԶԱՆԱԶԱՆ, ՅԵՐԵԲՏԱՍԱՆ ԱՄ՝ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ, ԵՐԲԷԲ ԶՍՏԱՅԱԻ՝ ՕՐ ՀԱՆԳՍՏՈՒԹԵԱՆ, ԲԱՅՑ ԿՐԿԻՆ ԹԵՒՕԲ՝ ՃՈՆ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ, ԲԱՐԶՐԱՅՈՅՑ ԶԱԶԳ ՄԵՐ՝ ՅԱԶՍ ՏԷՐՈՒԹԵԱՆ, ՈՒՍՏԻ ԵՏ ԱՐԲԱՅՆ՝ ԽԼԱՅ ՅԱՐԿՈՒԹԵԱՆ, ՈՐ ԶԷ ԱՍՏ ԵՐԲԷԲ՝ ԵՂԵԱԼ ՅԱԻՏԵԱՆ, ԲԱՅ ՅԱՆԹԻՐ ԲԱՐԵԱՅ՝ Ի ՊՈԼԻՍ ՄԻԱՅՆ, ԵՕԹՆ ԵԿԵՂԵՅԻԲ՝ ՆՈՐ ՀԱՏԱՏԵԱՆ, ԵՒ ՅԵՏ ՀՐԱԺԱՐՄԱՆ՝ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ, ԶԶՈՐՍ ԱՄ ԱՊՐԵԱԼ՝ ԷԱՌ ՍՈՒՐԲ ՎԱԽՃԱՆ, Ի ԹԻՒ ՎԱԾՍՈՒՆԻ՝ ԿԵՆԱՅՆ ԼՐՄԱՆ, ՍԼԱՅԱԻ Ի ՄԷՆՁ՝ Ի ՍՈՒՐԲ ՀԱՐՅ ԿԱՅԱՆ:

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1817 ՅՈՒՆԻՍԻ 27

Գերեզմանատան հիւսիսային կողմը կը գտնանք Կարապետ եւ Սարգիս պատրիարքներուն շիրիմները քով քով. առաջինն վրայ կը կարգանք հետեւեալը՝ իւրակերտ գերեզմանին վրայ.

«ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՒՆՆԵՐ ՆԵՐՈՒՍԱԳԷՄԻ ՄԻԱՐԱՆ ԿՈՍՏԱՆԿՆՈՒՊՈԼՍԵՅԻ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԵ, ՈՐ ՈՒԹԱՄԵԱՅ ԺԱՄԱՆԱԿԱԻ ՊԱՏՐԻԱՐԲ ԿԱՐԳԵՅԱԻ ԿՈՍՏԱՆԿՆՈՒՊՈԼՍՈՅ, ՅՈՐՄԷ ԿԱՄՈՎԻՆ ՀՐԱԺԱՐԵԱԼ ԱՌԱՆԶՆԱՅԱԻ Ի ՏԱՆ ԻՐՈՒՄ Ի ԽՐԻՍՏՈՒՊՈԼԻՍ, ԸՆԿ ՀՈՎԱՆԵԱԻ ՍՈՒՐԲ ԽԱԶԻ ԶԲՆԱՂ ԵԿԵՂԵՅՈՅՈՅ, ՅԱՄՍ ՏԱՍԵՆԻՆՆԵ ԵՒ Ի ՀԱՍՏԱԿ ՎԱԾՍՈՒՆ ԵՒ ԵՕԹՆ ԱՄԱՅ ԿԵՆԱՅ ԻՐՈՅ ՀԱՆԳՈՒՅՏԵԱԼ ԵԿԱԻ ՅԱՅՍ ԳԵՐԵԶՄԱՆԻ, ԶՈՐ ԻՆՎԵՐ ԷՐ ՊԱՏՐԱՍՏԵԱԼ. ՈՒՐ ԱՅԺՄ ԽՆԴԻԷ ԵՂԵՐԵՑՈՂԱՅԻ ԱՍԵԼ, ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ: ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1850 ՅՈՒՆԻՍ 31»:

Իսկ երկրորդին շիրիմագիրն է սապէս.

ՄԱՀԱՐՁԱՆ Տ. Տ. ՍԱՐԳՍԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՆԿԻԱՆՈՒՊՈԼՍԵՅՈՅ ԵՒ ՊԱՏՐԻԱՐԿԻ Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՆԳԻՐ, ՈԳԻԿ ԱՌԱԲԻՆԻ, ԸՆԿ ՏԵՈՒՐ ՇԻՐՄԱՒՍ ԱՆՇՈՒԲ. ԵՒ ԶՆՈՃԵԱՅ ՍԳԱՏԵՐԵԻ ԱՌԿԱԽԵՅԻ ԲՆԱՐ ՈՐԲԵԱՅ, ՈՂԲԱԼ ՅԱԻԲԺ ԲԱՐԻՈՅ ՀՕՐԿ ԶԵԼՍ ՅՈՐԿԱՅՈՅ ՄԱՀԱՅՈՒ, ԸԶԶՈՎՈՒԱՊԵՏԻ ՈՂԲԱԼ ՀԱՅՈՅ ՎԱԾՍՈՒՆ ԵՒ ՄԻ ՎԱՐԵԱԼ ԱՄՍ,

Ի ԳԱՄԲԱՐԱՆՍ ՀԻԼԷԲ ՄԱՐՄՆՈՅԻ ՆԵՋԻՅԻՆ ՆՍԵՄԱՏՈՒԵՐ, ՈՐՊԷՍ ԵՐԲԵՄՆ Ի ՍԱԳԻՄ ՏԵԱՌԸՆ ՊՕՂԱՅ ՀԱՆԳԵԱԻ ՆՇԽԱՐ, ՆԱ ՀՕՐԵՂԲԱՅՐ ԶԵՐ ԱՐԹՈՒՆ ԵՒ ՄԻԱՐԱՆ ՏԱՆՆ ՅԱԿՈՎԲԱՅ ԶՀՈՎՈՒԱԿԱՆ ՎԱՐԵԱՅ ՊԱՇՏՕՆ ՊՈԼՍՈՅ Ի ԳԱՀ ՀԱՅԿԱԶԱՆՅ ԴԵՏ. ՈՐԿԻՈՅԻ ԱՆԿԵՂԾ ԹԱՅՈՆ ԱՐԿԵՕԲ ԶՏԱՊԱՆ ՎԵՀԻԿ ԴԱՌՆ ԱՐՏԱՍՈՒԲ, ԱՅԼ ԹԱՅՅԷ ԵՒ ՅԱՊԱԳԱՅՍ ԱՌԱԲԻՆԵԱՅ ԽՆԴԻՑ ԼԱԼՕՆ, ՄԻՆՁ ՈՐ ՅԱՄՊՍ ՀԱՍՏԵԱՅ ԶԱԹՈՒ, ԴԱՐՁՅԻ ՅԱՅՍ ՀԱՐԿ ՀՈՂԱԶԱՆԳՈՒԱՍ, ԸՆԿ ՍՐԲՈՅ ԵՒ ԸԶԶԵԶ Ի ԽՈՍՏԱՅՆԱԼՆ ԱՇԵԼ ԴՐԱՆՏ: 1865 ՅՈՒՆԻՍ 28:

Բացի այս հինգ պատրիարքներէն կը հանգչին հոն ուրիշ Եպիսկոպոսներ՝ ինչպէս Պողոս Թաթաւեցի († 1675ին), որուն տապանագիրը յիշարած եմ արդէն. Պաղտասար Եպ. Պոլսեցի լուսարարպետ Ս. Երուսաղէմի († 1809ին)՝ զոր կը յիշէ Մկրտիչ Եպ. Աղանունի¹³¹. Գրիգորիս Եպ. Ալէաթճեան († 1899 Օգոստոս 15), որ Կիլիկիոյ կաթողիկոս ընտրուեցաւ 1896ին, բայց Սուլթան Համիտ զայն չլուսարարաց, վախճալով՝ որ Կիլիկիոյ մէջ յեղափոխական ընթացք նա կ'ունենայ, որովհետեւ Տարօնի Առաջնորդ եղած ժամանակը, Մուշի թուրք կառավարելին հետ վէճ մը ունեցած եւ զայն ապտակած ըլլալուն համար պաշտօնանկ եղած ու Կ. Պոլիս էր բերուած տարիներ առաջ: Աշխոյժ եւ զործունեայ (բայց զիւրաբար) Եկեղեցական մէջ՝ բաւական հմուտ. թաղուած է քով իւր հօր եւ մօր՝ որոնց վրայ Սրբազանը ինքը՝ սղջութեանը, կանգնեց գեղեցիկ Դամբան մը, բայց ինքը կը ննջէ անշիրիմ:

Այս Գերեզմանատունը թաղուած են՝ Իւսկիւտարի երկու Եկեղեցիներուն ու Գուգիւնճուքի Ս. Լուսաւորչին սպասաւորող բուր շանգուցեալ Բահանաները իրենց մասնայատուկ թաղին մէջ:

Օտեան, Պալեան, Փիշիշեան, Նորատունկեան, Նիզամեան, Սէֆերեան, Երկանեան, եւ այլ երեւելի ընտանիքներու անդամներ կը հանգչին այս Գերեզմանատունը: Հոս թաղուած են՝ նշանաւոր նկարիչներ՝ Պէհլու Ումէտ եւ Սաղայեան Աբրահամ. աղ-

¹³¹ Միաբանք եւ Այցելուք Հայ Երուսաղէմի, էջ 406:

զային Սահմանադրութեան հեղինակ եղողներէն Նիկողոս Պալեան († 1858) եւ ծանօթ բժիշկ՝ Տօթթ. Բարունակ Պէյ Ֆէրուհյան¹³² († 1868), անուանին Տէրոյնց Յովհաննէս Պատուելի († 1888), Սաչատուր Պուէտ Միւսաբեան († 1891), վաղածեռիկ Պետրոս Դուրեան¹³³ († 1872), սորա եղբայրը Յարութիւն Դուրեան ուսումնական երիտասարդը († 1874), Ուսուցչապետ Ռէթէոս Պէրպէրեան¹³⁴ († 1907), Վարդան Լուսինեան, Ու-

¹³² Ասոր ընդարձակ կենսագրութիւնը հրատարակած էմ, «Հանդէս Ամսօրեայ» մէջ 1895 թուի Հոկտ. ամսու էջ 310 եւ Դեկտ. էջ 361:

¹³³ Պետրոս Դուրեանի մահէն յետոյ, Իւսկիւտարի գլխաւորապէս ընկերութիւնը անոր Գերեզմանին վրայ կանգնեց բրգածէւ սիրուն կոթող մը, որուն լուսանկարը յատուկ գրութեամբ մը հրատարակեցի՝ «Հանդէս Ամսօրեայ» 1900ի՝ Մայիս-Յունիս միացեալ թիւին մէջ (էջ 177-178), արտագրելով նաեւ Տապանագիրը՝ զոր շարադրած է Պետրոսի եղբայրը Միհրան Դուրեան (այս եղիշէ Պատրիարք) եւ սրբագրած էր՝ Ս. Պ. Միսաբեան: Աւելորդ չեմ համարիր կրկնել հոս այդ Տապանագիրը, եղիշէ Սրբազանին պատանեկութեան զրչին՝ գրեթէ առաջին խաղերէն:

Աստ հանգչի մարմին Պետրոսի Դուրեան Որ քրանամեայ էջ ի գերեզման. Երկաթագործի սա ծընու որդի Բանաստեղծ քրտեալ ի կենաց աստի: Ի տարածման Յունուար քրտանի Հագար ուք հարիւր եօթանասերկի, Արեւմ իւր էր դեռ ի յառաւօտին Օրհասին սեաւ ամպէ ըզմա ծածկեցին: Մահ նորա բնակից իւրոց սիրելեաց Սուգ անմըխիթար եւ կըսկիծ էած. Վըշտըմբեր կենաց նորա սուկ վըկայ՝ Կըմեայ մահարձանս աւասիկ աստ կայ: Ծնեալ ի 1851, ի 20 Մայիսի:

Բայց Պատրիարք Խրիմեան Հայրիկ կ'ուզէր՝ որ մահարձանին վրայ դրոշմուէր, նոյն իսկ բանաստեղծին շեմ Հանգիստը վերնագրով՝ 1871ին գրած տաղը, զոր տարիներ յետոյ եղիշէ Սրբազան փորագրել տուաւ շիրմին միւս էջին վրայ, եւ է այսպէս.

Եթէ մօտի հոգակոյտիս, Թուխ մոխրագոյն և աչեր ներա Թէ ջուխտ մարգրիտ քափնն իմ վրա, Զը ցաւագնիր ոսկերտտիս. Այս իմ համգիստ իմ լըռամիտ, Այս օքեւամ հաղաղութեամբ:

«Տաղք եւ քատրերգութիւնք Պետրոսի Դուրեան», Կ. Պոլիս 1872, էջ 59:

¹³⁴ Պէրպէրեանի նախկին սաները 1932ին գեղեցիկ գաղափարն ունեցան շիրմ մը կանգնելու, իրենց Դաստիարակ-Ուսուցչապետին Գերեզմանին վրայ, եւ յաջողեցան ի գլուխ զայն հանելու: Այդ շիրմին բացումը հանդիսաւոր կերպով կատարուեցաւ 1934ին, վրան կը կարգացուի հետեւեալ վերտառութիւնը.

ԲԱՐԻՆ
ԳԵՂԵՑԻԿԸ
ՃՇՄԱՐԻՏԸ
—
ՈՒՍՈՒՅՁԱՊԵՏ
ՌԵԹԵՆՍ Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
1852—1907

ղուրիկեան, Պօլիկեան ծանօթ դիտուն գրագէտները եւ դեռ ուրիշ վաղաթարչամ ծաղիկներ գիտութեան, որոնց ցանկը շատ երկար է գրել:

Դուրեանի գերեզմանին կարգը կը հանդէսին՝ մայրս († 1904), Հայրս († 1906), մօրեղբայրս Դեղարան-Գիւրգէտ Նշան Դուրեան († 1918) սորա Հայրը՝ որ էր մեր մօրահայրը՝ յայտնի վերաբոյժ Դուրեան աղա († 1869) նաեւ մեծ մայրս, մօրաքոյրերս իրենց պաշտելով ու պապու պապելով:

* * *

Այս Գերեզմանատունը ունի երեք ջրհոր. մին փորուած է Ս. Կարապետի Թաղին մէջ, իսկ միւս երկուքը Ս. Սաչի մասին մէջ. այս վերջինները իրենց վրայ ունին Արձանագրութիւն, որուն մէջ հատը կը յիշատակէ Սուրբ Կարապետի ջրհորը՝ որ չկրէր ո՛ր եւ է գեր:

Ս. Սաչին մէջ ջրհորը եւ Ս. Կարապետինը փորել տուած է Կեսարացի Սարգիս հալիֆայ Յովհաննէսեան, այն՝ որ Ղալաթիոյ եւ Եֆէսի մահալլէի եկեղեցիները շինած է եւ ունէր «արեւմտի ֆարտարապետ»ի տիտղոսը, ինչպէս նշանակած էմ արդէն Ա. հատորիս (232) եւ Բ. հատորիս (438) մէջ, նաեւ Գուղկունճուքի մասին գրածիս մէջ: Իսկ երրորդ ջրհորը շինել տուած է՝ Կէօկնեանց Թովմաս:

Սարգիս Սալիֆային փորել տուածը 200 տարուան հնութեան կնիքը կը կրէ՝ ունենալով 1728 թուականը, ուրկէ 72 տարիներ յետոյ կը շինուի Կէօկնեանցիւր: Ասոնց Ար-

ԱՆՀՈՒՆ
ՊԱՇՏՈՒՄՈՎ
ԿԱՆԳՆԵՑԻՆ ԱՅՍ ՇԻՐՄԸ
ԻՐ ԵՐԱԽՏԱԳԵՏ ՍԱՆԵՐԸ
21 ԱՊՐԻԼ 1932

Ռ. Պէրպէրեան կը հանգչի քովը իր կնոջ, որ մեռաւ 1899ին եւ որուն վրայ ինքը Պէրպէրեան իր ողջութեանը կանգնեց գեղեցիկ կոթող մը, վրան գրել տալով հետեւեալ յուշի տողերը, արդիւնք իւր գրչին.

Ի
ՆՈՒԻՐԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ
ՏԻԿԻՆ ՋԱՐՈՒՀԻ
Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ
1864—1899
ԳԵՂ ԵՒ ՇԸՆՈՐՀ
ԱՆՁՆ ԻՐԻ ԲՈՂՈՐ
ԶՔՆԱՂ ԻՐԻ ՀՈԳԻՆ
ՍԻՐՈՅ ԲՈՅՆ ՋԵՐՄԻՆ.
ԱՌՆ ԻՐԻ ՊԸՍԱԿ
ԵՒ ՄԱՅՐ ԱՆՈՒՇԱԿ...
ՎԱ՛Ն, ԱՅՁՄ, ԱՆՄԵԻԹԱՐ
ԵՐՆՐԱՎՈՒՄՔ ԹԱՅՍ ՔԱՐ

ձանագրութիւնները թէեւ հրատարակած էմ¹³⁵ արդէն, բայց հոս ալ զանոնք ցոյց տալ կարելի էր կը համարիմ:

1.

Յիշատակ է ջըրիարս այս եւ այն որ ի ԵՒՆԻՄԱՍԻԱՅԻ ԹԱՂԻ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ Ե ԶՐԻՄ, ԿԵՍԱՐԱԿԻ ՅՈՒՍԱՆԻՍԻ ՈՐԴԻ ԲԱԳՈՒՄ ԵԿԵՂԵԿԵՑԵԱԿ ԵՒ ԱՅԻ ԲԱՐԵԳՈՐԾՈՒՔԵԱՆԿ ԱՊԱՍՏ ՄԱՐԳԻՍ ԽԱՂԻՓԱՅԻՆ ԵՒ ԻՐ ԱՐՈՒ ՉԱՐԱԿԱԿԵՆ: ԹԻՒ ՓՐԿԻՅԻՆ ՌՉԻԸ:

2.

Պարգեւ ի Տեառնէ՛ Է այս ջուր հորիս, Ի յիշատակ իմ՝ եւ իմ ծընողքիս: Մարիամ Ղուլեան՝ Կեօկնեանց Թովմայիս, Որ ի յարեւելս՝ ծընեալ յԱգուլիս: Շինուած ջըրիարիս՝ եւ այնոյ քաղիս, Եւ հանդէպ սորին՝ ընդ միւս շինուածիս: Ջերիս շինուածը՝ յանձնելով զաւկիս, Առ ի շէն պահել՝ որդւոց ի յորդիս: Որք ըմպէք զայս ջուր՝ եւ հանգչիք վայրիս Աղաչեմ ասել՝ ըզմի ողորմիս: ԹԻՒ ՓՐԿԻՅԻՆ 1800:

Առաջինը կը գտնուի՝ Ս. Սաչի շիրմատանի մուտքին անմիջապէս մօտը եւ ձախ կողմը. իսկ երկրորդը՝ դէպի հիւսիսային կողմի եղերքին վրայ:

* * *

Այս Գերեզմանատան ճիւղ մէջ տեղէն բաւական մեծ մաս մը ժամանակին յատկացուցած են Յոյներու, ասոնք սակայն՝ չարաչար կերպով դործածած են այդ նուիրատուութիւնը, ոտնձգութիւններ սկսած են ընել եւ այն աստիճան՝ որ տեղի տուած են սոսկալի կռիւներու, որոնք վերջ գտած են կառավարութեան ամենախիստ միջամտութեամբը: 1862ին էր՝ որ պատահած են այս տիտղոս դէպքերը¹³⁶, եւ պատճառը սա եղած է:

Իւսկիւտարէ դէպի Արեւելք երկու ժամ հեռաւորութեամբ գտնուած Ալեմտաղի հայաբնակ գիւղին մէջ Հայ աղջկանակ մը կը մեռնի, մարմինը կ'ըջեցնեն Ս. Սաչ Եկեղեցի, ուր յուղարկուողութիւնը կատարուելէ յետոյ, կը տանին Գերեզմանատուն եւ կը թաղին ընտանեկան դամբարանը: Յոյները կը կարծեն թէ՛ իրենց բաժնին մէջ թաղուած

¹³⁵ Հայ Բժշկական Արձանագրարանութիւն, էջ 52 եւ 92:
¹³⁶ «Մասիս», 1862:

է այդ ննջեցեալը եւ զիջերով կու դան կը հանեն զայն ու կը թողուն անթաղ, ի՛նչ որ մեծ դայթակղութիւն կը պատճառէ, եւ տեղի կու տայ արիւնահեղ կռիւներու, որոնք կը յիշատակուին դեռ իբրեւ հայկա-յոյն ընդհանրութիւններ:

1862 թուականէն ասդին ալ դարձեալ եղած են նման վէճուկագեր, բայց թեթեւանցած են: Բարեբախտաբար՝ 1880ին նախագահութեամբ Ս. Կարապետ Եկեղեցւոյ Բարոյիչ Իզմիրլեան Մատթէոս Սրբազանին Հայերէ է Յոյներէ կազմուած է յատուկ Յանձնաժողով մը՝ որ ազգային հանգանակութեամբ Գերեզմանատունը ամբողջապէս որմնապակած է, եւ Հայոց եւ Յունաց սեպհական տեղերու սահմանները ճշգրտ ու որոշած է մասնաւոր աշտարակիկներով:

Գերեզմանատան հարաւակողմը անկիւն մ'ալ կը պատկանի Հրեաներու, բայց ասոնք երկար առեմէ ի վեր մեռել չեն թաղեր հոն:

* * *

Այս Գերեզմանատան մէջ 1875ին փորագրուած է՝ իմ շարադրած մէկ տապանագիրս, որ դաստիարակներէս՝ Կարապետ Արսլանեանի զոքանչին համար էր եւ պատրաստած էմ զայն յատուկ խեղդանքով. պատանեկութեանս առաջին ոտանաւորներէն էր այն եւ է սապէս.

Ը
ՀԱՆԳՈՒՏ
ԲԱՐԵԳՈՐԾՈՒՄ ԵՐԿՐԵՄ ՏԻԿՆՈՋ
ԿՈՂԱԿՈՒՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂԱՅԻ ՉԻՉԵԿՃԵԱՆ
ՈՐ ԿՈՐՈՅՍ ՋԱՐՈՒՆ Ի ՀԱՍԱԿԻ ԾՈ ԱՄԱՑ
ՄԱՀՆ Ե ՎԱԽՃԱՆ ԵՒՑ ՀԱՄԱՅՆ,
ԱՆԿԱՐՁ ՎՃԻՌ ԱՍՏՈՒԱԾԱԿԱՆ.
ՈՐՈՎ ԵՍ ՀՈՂ ԵՒ՝ Ի Ի ՀՈՂ
ՓՈՒՅՆԱԿ ԵՍԱԿԻՄ ՄԱՀՈՒԱՆ Ի ՔՈՂ.
ՋԻՄ՝ ՍԳԱՅԻՆ ՈՐԿԻՔՍ Ի ԼԱՑ,
ՄԱՐԿՆ ԱՐԺԱՆԻ Ե ԱՐՏԱՍՈՒԱՑ.
ՋԱՅՍ ԿԱՐԿԱՅԵ՛Ք ՎԵՐԱՑ ՇԻՐՄԻՍ,
ԹԵ՛ ԶՇՄԱՐԻՏ ՉԻՔ ԿԵԱՆՔ ՅԱՍՏԻՍ:

Հոն՝ կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով, 1877 Սեպտեմբեր 24ին արտասանած էմ Դամբարանական մը, աւրընթեք գերեզմանին Սարգիս Եղազեանի դարոցական ընկերիս, որ Գերեզմանին էր մեծանուն Գրիգոր Օտեանի եւ կը խոստանար մեծ ապագայ:

Յարգելու համար յիշատակը այդ վաղածեռիկ Պատանույն, պարտք ինձ կը համարիմ գետեղել հոս այդ Դամբարանականս, զոր կը կարծեմ թէ՛ դեռ երեք էմ արտասանած.

«Յուզարկաւորք»

Քանի՜ թաղմութեամբ կը մատչիմ սա հողակոյտին՝ որ վայրելի մի առաջ մեր ընկերական բուրաստանէն զեղարայր ծաղիկ մը յափշտակեց, ծաղիկ մը դեռ նոր փթթած, հա՛ղիւ արշալուստը ցօղին մէկ քանի շիթը ծծած. այս ծաղիկն էր՝ Եղաճաճեանն եւ Օտեան անուան անուանի գերգաստաններուն ձեռատունկը, Սարգիս Պատմիկն՝ որ իւր եօթնեւտասնամեայ դարնան զեղած իծաղ առաւօտին մէջ, մինչ Հայրենեայ վշտահար ճակտին դարդն եւ իւր ընտանեաց փայլն ըլլալու կը պատրաստուէր, օրհասին սեւ ամպերը ծածկեցին հուպ ընդ հուպ նորա արեւը՝ մարելով ի սպառ այն մեծամեծ յոյսերը՝ զորս իւր վարժապետները կը տածէին եւ ոչնչացնելով այն վեհմ նպատակները՝ զորս վաղաճեռիկ Հայրենապաշտը կը թաղուցանէր իւր մատաղ ուղեղին մէջ: Բա՛րէ, ի՛նչ տխուր տպաւորութիւն մը կ'ազդէ յիս սա սպաստուներ գերեզմանը, ի՛նչ խորհրդաւոր յիշատակներ կը դարձուցանէ մտքին մէջ սա եղբերակ մանուկներու դասը:...

Միւրեցեալը իմ Սարգիս, տարի մը յառաջ չէ՞ր, որ այս մանուկներէն շրջապատուած, դէպի սա հանդիպակաց բլուրը կ'ուղեւորէինք մեր ընկերական խրախմբանքին հանդէսն ընելու, այո՛, հերոսն ճիշդ այս օրս էր, որ ընկերները Չամբաճայի բլեր ստորտուր ժողովուած, զքեզ մերթ անոր հովանաւոր մայրեններուն ներքեւը կը բազմեցունէին եւ մերթ վճիռ աղբիւրներուն եղբերը կը հանդէսեցունէին. այսօր էր՝ որ փոխան զինուոյ բաժակաց, խաղողի ողկոյղներ ի ձեռին, ուխտեցինք մեր եղբայրական խնջոյքը նորոգել ամէն տարի... բայց աւա՛ղ... չէի կարծեր այն ատեն, թէ այն ուխտ այսօր ուղիւնահաս արցունքով պիտի կատարէինք. ուրեմն այն օրուան ժպտները յաւիտեական հրաժեշտի ողջոյնները էին զորս կու տայր ընկերներուդ. ո՛հ, չէի կարծեր ես յայնժամ թէ նոյն պարմանիներու երամը, տարի մը վերջ քու Քնարանիդ շուրջը կը բուրբէր, դառնապէս բողբոջելով մահուան գիշատիչ ճերաններուն դէմ, վա՛հ, չէի կարծէր վերջապէս, թէ նոյն օրը քեզ հետ ուրախութեան երգեր հնչեցունող ձայները, տարի մը յետոյ քու նորասկիզբն արեւելի վերջալոյսոյն Հանդատեան տխուր տաղերն եղբի երգէն այսօր... Թառամեցան սիրաբայր շրթունքը եւ ես չկրցայ անոնց վերջին մըմունջը լսել. շորացան քո սիրազար մատուցը, աւա՛ղ չկրցայ յետին համբուոյս դրոշմել անոնց վրայ. չի կրցայ կ'ըսեմ, եղբայր իմ, յետին ողջոյնս քեզ նուիրել, սրացար վաղ ընդ փոթ խափուսիկ ստուերի մը նման... Ե՛րթ ապա... Ե՛րթ, վեհազնդ մանուկ, ճախր առեալ թոխի՛ր սրաթեւ արծուի նման, սկստուէ՛ աշխարհաբիս հովտին սեւամած կամարը. սլացի՛ր, աղէ՛, անմահութեան կայանը եւ Արարչին աթոռին առջեւ, հեշտամըմունջ ձայնիւ սփոփանք խնդրէ՛ վշտահար ծնողքիդ եւ եղբայրներուդ համար, սփոփանք քու բարեկամներուդ եւ ընկերներուդ համար, որոնք արտասուաթոր աչքերով յաւիտեական քունիդ մահիճը կը կնքեն... ես չպիտի մոռնամ զքեզ երբ դարնան դուարթ օրերուն մէջ երբ գերով ճնշեցուցած դաշտերը ման առնում... չպիտի մոռնամ երբէք զքեզ, երբ այցելեմ այն լոյսի եւ երջանկութեան տաճարին՝ ուր մեր մանկութեան խնձղալի ժամերը սահեցան...:

Իբրէ՛ք արդ, բերէ՛ք, վարդի թերթեր եւ շուանի փունջեր, ո՛ր ընկերներ, բերէ՛ք ու ծաւալեցէք

ձեր եղբոր շուրջը, եւ երբ մերթ ընդ մերթ ձեր քայլերը ուղղէ՛ք դէպի հոս, ձեր աչքի աղի արցունքը հասցնելով այս գերեզմանին վրայ, յիշեցէ՛ք թէ այդ սեւ սեւ հողերուն տակ կը հանդէս սիրա մը՝ որ սիրայ համար կը բարախէր, կը պահուի ձեռք մը, որ ընկերսիրութեան եւ միարանութեան պատկերը միշտ կը դժէր...»

Իւսկիւտարի ազգային Գերեզմանատունը գրեթէ դասարան մը ըրած էինք մեզի, եւ երբ երեկոյեան արձակուրդի ժամը հնչէր, մենք՝ իմա՛ Յարութիւն Մըմբեան, Մեւքոն Կիւրճեան, Միհրան Դուրեան եւ ես, կ'ուղեւորէինք հոն եւ ուշի ուշով կը կարգայինք Տապանադիրներ, որպէս զի Ոտանաւոր գրելու վարժութեան տեղեակ ըլլայինք, եւ այսպէս՝ Պալեանց, Փիլիպիանց¹³⁷, Նորատունկեանց, Գուրգեանց եւ ուրիշներու շրջաններուն վրայ դրօշմուած զեղեցիկ տողերը, ինչպէս նաեւ Երկնայեաններու Գերեզմանադիրները կարգալով գոց կ'ընէինք... ո՛հ անմեղութեան եւ քաղցր երազներու օրեր...:

Գերեզմանատան ճիշդ հարաւակողմը կը տարածուի Պաղար-պաշի (Այգեղուի) կոչուած լայնարձակ պողոտայն, որ երկուստեք ունէր երբեմն Հայ Երեւելիներու փառաւոր տունները, տեսարան ունենալով Մարմատաի հիւսքանչ՝ ծոցը Բիւթանական ու Իշխանաց կղզիները:

Այս պողոտային վրայ կը յիշեմ տղայութեանս՝ երկիցս ներկայ եղած ըլլալս ամենահոծ բազմութեան մը, առթիւ յուզարկաւորութեան երկու նշանաւոր Հայերու, մին բժիշկ Բարունակ Պէյ Ֆէրուհիանի 1868ին¹³⁸ եւ միւսը բանաստեղծ Պետրոս Դուրեանի 1872ին¹³⁹, որոնց մասին գրած եմ արդէն տարիներ առաջ:

Գերեզմանատան հիւսիսակողմն ալ շինուած է գէպի Չամբաճայ բլուրը առաջնորդող երկարաձիգ ճանապարհը Թօրհանգիլիօղլու կոչուած, որուն ճիշդ սկիզբը կը գտնուէր ատենօք Յակոբ Վարդուխանի հիմնած Հայկական քատրոնը, ուր նշանաւոր հանդիսացած են Պէյնլեան, Նալեան, Մաղաքեան, Միսակ եւ Փասուլեան, Ռշտունի եւ Թրեանց, Աղամեան, Մնակեան, Փափագեան եւ ուրիշ հեղինակաւոր Դերասանները, եւ Տիկին Արուսեակ, Գարագաշեան Քոյրերը,

¹³⁷ «Փամանակ», Կ. Պոլսոյ, 8 Մայիս 1933: Յօդուած Մելիքի-Ասատուրի՝ Փիլիպիանց Տապանադիրները:
¹³⁸ «Հանդէս Ամսօրեայ», 1895, Թիւ Հոկտեմբերի եւ Դեկտեմբերի:
¹³⁹ Անդ, 1900, Թիւ Մայիս-Յունիս, էջ 177—178:

Նուարդ, Սիրանոյշ, Հրաչեայ Դերասանուհիները:

Այս թատրոնը որ ամառները Իւսկիւտար եւ ձմեռներն ալ Կ. Պոլիս ի Կէտիկ Բաշա թաղին մէջ կու տար իր ներկայացումները, խիստ փայլուն ու շքեղ շրջաններ ունեցած է, մինչեւ այն օրը՝ երբ թուրքերէն լեզուաւոր ներկայացումներ տալ սկսաւ Յ. Վարդուխան:

Հայ թատրոնին արեւը ա՛յլ եւս մարեցաւ այդ պահուն, կորաւ ամէն ինչ, Դերասաններ ու Դերասանուհիներ հետզհետէ մեռան, ողջ մնացողներն ալ դէս ու դէն ցրուեցան, եւ Յակոբ Վարդուխան, որ իր մասնաւոր վարչութեամբը այնչափ հզօր զարգացուցիչն եղած էր Հայ բեմին, թրքանալով վերջացուց իր կեանքը:

* * *

Այս թատրոնէն վեր՝ լայն ճանապարհին երկու երկայնքը կանգուն էին Հայ մեծատուններու ապարանները իրենց բեղուն այգիներով, ինչպէս կը տեսնայինք մեր տղայութեանը, Արաթեան, Գափամաճեան, Սմբատեան, Միքրոյեան, Չուհաճեան, Փիլիպիան, Փափագեան, Չօլաքեան, Ծահինեան, Քիւրքճիխանյան շքեղ բնակարանները, որոնց կարգին մեծ հայրս ալ (Մօրահայրս) ունէր համեստունակ տուն մը իր այգիով, ուր կ'երթայինք ամառները. բայց ասոնց բուրն ալ անհետանալով անհետացան հետ ընդ հետ...:

Այս պողոտայէն վեր կէս ճամբուն վրայ շինուած է հասարակաց պարտէզ մը¹⁴⁰, ուրիկէ յետոյ կ'ելլուի՝ Չամբաճայ կոչուած հիանալի բլրակը, որուն ծոցէն բխած անուշ հիանալի բլրակը, որուն ծոցէն բխած անուշ հիանալի բլրակը է եւ որուն Սօսի ճուղը խիստ համբաւուար է եւ որուն Սօսի եւ Նոճի ստուար ծառերուն շուրջն տակ կը սիրէին երթալ յաճախ Իւսկիւտարի Հայ ժողովուրդը եւ Հայ բանաստեղծները, զիտելու եւ վայելելու վոսփորի գեղածիծաղ տեսարանը եւ երազելու... չլիտեմ ի՞նչ...:

Պետրոս Դուրեանի սիրական վայրն էր Չամբաճայ, չա՛տ ու չա՛տ անգամներ կ'երթար հոն հանգչիլ՝ իր սիրելի ընկերոջ՝ Լուիսֆեան Վարդանի հետ, որ իրմէ առաջ վաղաժեռիկ եղած է:

¹⁴⁰ 1869ին Ս. Խաչ վարժարանի աշակերտներս խմբովին տարին այս պարտէզին շուրջը, ուր շապիկ հագած կարգաւ կեցանք ու երգերով ողջունեցինք Ֆրանսայի Էօճէնի Կայսրուհին որ Սուլթան Ապրիլ-Ֆեան Վարդանի հետ կը վերադառնար Ալեմտաղի դիւղէն:

Ասոր յիշատակին նուիրած է նա իր «Հեծեծմունք» վերնագրով սրտառուչ տաղը, որուն մէջ կը գրէր.

«Ո՛հ, կը յիշե՞ս Չամբաճայի Սարը նստած լո՛ւռ մը լիսայինի, Ուր շուք տային մեզի նոնիք Սեւ հովանոց վշտահարի...¹⁴¹»:

Իւսկիւտարի Հայ բնակչութեան նախամեծար զբօսավայրն էր այս Չամբաճայ որ Մեծ անունով որակուած է, զի ասկէ քիչ հեռու դէպի հարաւ կը գտնուի Փոքր Չամբաճայի բլրակը՝ սիրուն եւ զեղատեսիլ, իշխանալով Մարմարայի ծովին ու Իշխանաց կղզիներուն: Բաղցրահամ ջուր մ'ալ սա ունի, ասոր մօտերը հին ատենը Հայերն ունին եղբր ընդարձակ այգեստաններ, ինչպէս կը գրէ Երեմիա Չէլչպի ըսելով՝

Տոյ 154 եւ 155.
«Եւնիկի մահալլէս ի վեր՝ յաջ ահեակ բազում այգեստան, Ծառքն Հայոց մինչ մերձ ի սուլթան Մուրատին Չամբաճայն»:

«Սուլթան Մուրատի Չամբաճայն» ըսածը, «Փոքր Չամբաճայն» է ուր գեռ քանի մը տարի առաջ գոյութիւն ունէին Հայերու սեպհական սրանչելի այգիները, ինչպէս նաեւ Քէօզէեան Յակոբի խիստ ընդարձակ զարաստանն ու այգին այժմ բոլորովին փճացած եւ օտարի ձեռքն անցած:

Իւսկիւտարէն դէպի Արեւելք ընթանալով, երկու ժամ հեռաւորութեամբ, զեղեցիկ ու խորհրդաւոր մեծ անտառի մը գերիկին մէջ կը գտնուի, կամ լաւ եւս է ըսել՝ կը գտնուէր՝ «Ալեմտաղի»¹⁴² կոչուած գուռ հայաբնակ զիւղակը, որ ունէր «Ս. Նշան» անունով քարուկի սիրունակ եկեղեցի մը՝ շինուած Աղանի Ստեփան Պատրիարքի օրով, ինչպէս կը յայտնէ՝ դուանը վերեւ փորագրուած վերտառութիւնը, զոր անձամբ քաղած եմ 1894ին եւ է.

ՆՈՐՈԳԵՑԱԻ Ի ՀԻՄԱՆՑ ՀՐԱՇԱԳՈՐԾ ԵԿԵՂԵՑԻՍ ՍՈՒՐԻԲ ՆՇԱՆԻ ԱՐԳԵԱՄԲԻԲ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ Ի ՊԱՏՐԱՐԳՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՍՏԵՓԱՆՆՍԻ ՍՐԲԱՋԱՆ ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍԻ 1835 ՅՈՒՆԻՍ 15¹⁴³:

¹⁴¹ Տոյ 154 եւ 155-ը քարտեղագրութիւնի Պետրոսի Դուրեան, Կ. Պոլիս, Տպար: Արամեան, 1872, էջ 47:
¹⁴² Չոր Խ. Պ. Միսաքեան, «Աշխարհալիտան» էջ 142:
¹⁴³ «Պատմ. Ա. Պերպլեանի», էջ 488:

